

Հայրենիքի Փրկութեան Ծարժումի Հսկայածաւալ Հանրահաւաքին Ընթացքին Ազդարարուեցաւ Անդադրում Անհնազանդութեան Ծարժումներու Մեկնարկը



Կարդալ էջ 3

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի յայտարարութիւնը Հայ Դատի յանձնախումբի Օթթաուայի շէնքի գնման առթիւ



Կարդալ էջ 3

Տասնամեակներէ ի վեր, աշխարհասփիւռ Հայ Դատի յանձնախումբերու գործունէութեան կիզակէտը Հանդիսացած է հա ժողովուրդի ոտնահարուած իրաւունքներու պաշտպանութիւնը, ազգային ձգտումներու իրագործումը եւ Պատմական Հայրենիքի հողատարածքին վրայ պետութիւն ունենալու հայ ազգի իրաւունքը:

Միացեալ հայրենիքի տեսլականով գործող ՀՅԴ Հայ դատի յանձնախումբերը այսօր վերոնշեալ ուղին ու գործելաձեւը կը շարունակեն, յատկապէ՛ս Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչումին եւ Զաւախքի հայութեան իրաւունքներու պաշտպանութեան ուղղութեամբ, միաժամանակ կերտելով Սփիւռքի ազգաբնոյժ ինքնութեան ռազմավարութեան ձեւաւորումը:

Վերջին տասնամեակին, Պաքուի եւ Անգարայի համակարգուած հայատեսաց քարոզարշաւին լծորդուած են թրքական եւ ատրպէյճանական սփիւռքի համայնքները, Ամերիկեան ցամաքամասէն մինչեւ Ուկրաինայ եւ Եւրոպայի ցամաքամասերը, ներառեալ Գանատան, ուր երկու երկիրներու պետական ներկայացուցչութիւններու կողմէ հետեւողական ու ծրագրուած գործընթաց կը տարուի պատմութիւնը խեղաթիւրելու ու ապատեղեակատուական արշաւներ սանձադրծելու:

Գանատայի Հայ Դատի յանձնա-

Խմբագրական Հայ Դատի նոր միջնաբերդը

«Հայ դատի գրասենեակները պէտք է աշխատեն այնպէս, ինչպէս իտալական արտաքին դիւանագիտութեան դէպքում է, որովհետեւ միայն այդ դէպքում կարելի կը լինի արդիւնքների հասնել»

Վահան Յովհաննիսեան

խումբի հայկական հարցի լուծման գծով նպատակաձգուած սեւեռակէտ կը հանդիսանայ այն իրողութիւնը, որ Հայոց Յեղասպանութիւնը եւ Թուրքիոյ անժամանցելի պատասխանատուութիւնը քննարկման ենթակայ երբեք չեն կրնար ըլլալ եւ առ այդ կը պահանջէ լրակատար հատուցում՝ Յեղասպանութեան իբր արդիւնք բռնադրաւուած պատմականորէն հայկական հողատարածքներու եւ ազգային, մշակութային ու հոգեւոր բնաջնջուած կամ իւրացուած կառույցներու ու յուշարձաններու համար:

Կրնանք աներկբայօրէն հաստատել, որ տասնամեակներու ընթացքին, համեստ պայմաններով հանդերձ, Գանատայի Հայ Դատի յանձնախումբը տիրանաւ աշխատանք ու ձեռքբերումներ իրագործած է, 80-ական թուականներու նահանգային խորհրդարաններու Հայոց Յեղասպանութեան ճանաչումներէն մինչեւ յաջորդաբար 2002 եւ 2004 թուականներու Գանատայի վերին պալատի եւ դաշնակցային խորհրդարանի յեղասպանութեան ճանաչման բանաձե-

ւերն ու օրինագիծերը:

Գիտարուեստի նորօրեայ զարգացումներուն եւ քարոզչական յարափոփոխ աշխարհակարգի մը մէջ ըլլալով հանդերձ, Գանատայի Հայ Դատի յանձնախումբը քարոզչական իր մարտավարութիւնը ինքնավերասահմանման ենթարկելով այսօր կը բանակցի պետական մակարդակի բարձրագոյն օղակներուն հետ:

Լուպայիյնկը ու քարոզչական բանակցութիւնը յարատեւ եւ հետեւողական գործընթաց է, որ դադար չունի եւ պէտք է ունենայ, մանաւանդ հայ ազգին համար, որ այսօր գտնուելով աշխարհաքաղաքական ամենէն բարդ իրադրութեանց մէջ, ստիպուած է յաւելեալ ինքնամղումի ենթարկելու իր քարոզչական կռուանները, ստիպուած է միշտ զգաստօրէն դիմադրաւել նորանոր մարտահրաւէրները, յատկապէ՛ս արցախեան պատերազմէն ետք, որպէսզի մեր հաւաքական յիշողութեան մէջ քանդակուած մնայ, կորուսեալ հայրենիքին ու կորուսեալ ծննդավայրին իրաւատէրը ըլլալու անժամանցելի պարտաւորութիւնն ու պատասխանատու-

թիւնը:

Օթթաուայի Հայ Դատի գրասենեակը, իր նպատակաւորուած եւ բազմաբեւեռ աշխատանքային ծիրով, 15 տարիէ ի վեր, որպէս ազգեցիկ քաղաքական եւ քարոզչական կառույց, կը գործէ տեղեկատուական եւ յարաբերական բնագաւառներէն ներս:

Այսօր, ՀՅԴ Գանատայի կառույցի Շրջանային ժողովներու ընթացքին ընդունուած յստակ բանաձեւումներու լոյսին տակ, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն, Օթթաուայի քաղաքական գործունէութեան գնեց կալուածային շէնք մը, որ շուտով պիտի դառնայ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի նստավայրն ու աշխատանքային գրասենեակային համալիրը:

Հայ Դատի Օթթաուայի այս նոր միջնաբերդը, կու գայ յաւելեալ աւելն ներարկելու աւելի քան 70 տարուան համագանատական Հայ Դատի աշխատանքներուն:

Արեւմուտքի մէջ Հայ Դատի Օթթաուայի մարտկոցը՝ հայութեան պահանջատիրութեան անվկանդ հետապնդման հաւատարիմ, քարոզչական գործադաշտը ծաւալելու վճռականութեամբ պիտի շարունակէ հայրենատիրութեան առաքելութիւնը:

«Հորիզոն»ի Խմբագրական



YOUR PASSPORT TO ADVENTURE.

2020 PASSPORT TOURING

STARTING FROM

\$51,660*



HONDA GABRIEL

BOOK YOUR TEST DRIVE WITH

TRO BACHEKJIAN
Certified Specialist

MIKE TOROSSIAN
Lease Renewal Manager

7000, boul. Henri-Bourassa Est,
Montréal-Nord H1G 6C4
www.hondagabriel.com
514 - 327 - 7777

Limited time offers applicable to eligible retail agreements, while supplies last, on qualifying new and previously unregistered Honda models. 2020 Passport TOURING. Price is \$51,660.00. Conditions apply. FOR ALL OFFERS: up to \$955.00 freight and PDI; applicable fees, taxes and duties (all of which may vary by region and dealer); (if included in BC, AB, SK, MB, ON and QC, and (if extra in PEI, NS, NL, NB, YK, NT and NWT. Licence, insurance, registration (including, where applicable, item registration fee (up to \$60.00) and item registration agent fee (up to \$6.50)); dealer new line (QC only) and applicable taxes are extra. All incentives will be deducted from the negotiated vehicle price after taxes. Model(s) displayed for illustration purposes only and may not be equipped as shown. Certain features only available on certain trims. Dealer may sell lease for less. Dealer order/price may be necessary (but may not be available in all cases). Lease and finance offers provided through Honda Financial Services (HFS) on approved credit. Visit honda.ca or Honda Gabriel for details. © 2020 Honda Canada Inc. *Finance and Lease offers on approved credit. Regional offers, lease and finance conditions apply. See Honda Gabriel for more information.



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN



Մեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիիի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօւէ» եւ Լաւալի «Ծուշի» մասնաճիւղերու վարչութեանց Հաղորդագրութիւն

Թագաժահրի համաճարակին պարտադրած սահամանափակումի պայմաններուն հետեւանքով, Հայ Օգնութեան Միութիւնը, բարեսիրական այլ կազմակերպութիւններու նման, դէմ յանդիման գտնուեցաւ տնտեսական դժուարութիւններու՝ իր ծրագիրները իրագործելու համար:

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի Մոնթրէալի եւ Լաւալի գոյգ մասնաճիւղերը, հաւատարիմ իրենց ուխտին, շարունակեցին իրենց գործունէութիւնը եւ օժանդակելով հանդերձ իրենց գաղութի պահանջներուն եւ ՀՕՄ-ի ընթացիկ ծրագիրներուն, զօրակցեցան Լիբանանահայութեան եւ Արցախի ի նպաստ շտապ օգնութեան դրամահաւաքներուն:

ՀՕՄ-ի Մոնթրէալի եւ Լաւալի գոյգ մասնաճիւղերու եկամուտը կը գոյանայ անդամավճարներէ, նուիրատուութիւններէ եւ առիւծի բաժինը հանդիսացող՝ հասութեաբեր զանազան ձեռնարկներէ, որոնք բնականաբար կարելի չեղան կազմակերպել ներկայ պայմաններուն մէջ:

Պահը արտասովոր է եւ ՀՕՄ-ի գործունէութիւնը սուրբ:

Հետեւաբար, Մոնթրէալի եւ Լաւալի մասնաճիւղերու վարչութիւնները, խորհրդակցաբար ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան հետ, որոշում կայացուցին չեղեալ համարել 15 մարտ, 2020 թուակիր կանանց միջազգային օրուայ տօնակատարութիւնը եւ օրին բացայայտուած ծախսերը ամբողջացնելէ ետք, մնացեալ գումարը ամբողջութեամբ յատկացնել ՀՕՄ-ի ծրագիրներուն:

Շնորհակալութիւն ձեր հասկացողութեան եւ ձեր վստահութեան հանդէպ ՀՕՄ-ի աշխատանքներուն:

Ժողովուրդիս հետ, ժողովուրդիս համար:

Հայ Օգնութեան Միութեան մասին

Հայ Օգնութեան Միութիւնը ինքնավար, ոչ-կառավարական եւ ոչ-դաւանական մարդասիրական կազմակերպութիւն մըն է, որ կը ծառայէ հայ ժողովուրդին եւ կը ձգտի պահպանել հայութեան մշակութային ինքնուրոյնութիւնը:

Հայ Օգնութեան Միութեան գործունէութեան դաշտը ընդարձակ է եւ յարատեւ կը յարմարի հայ ժողովուրդի յարափոփոխ կարիքներուն՝ հետեւեալ մարզերէն ներս՝ մարդասիրական, առողջապահական, խնամատարական, դաստիարակչական, քարոզչական, մշակութային, ընկերային, կրթական:

Փետրուար 16, 2021

ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօւէ» եւ Լաւալի «Ծուշի»
մասնաճիւղերու վարչութիւններ

Գանատայի Հայոց Թեմը կը շարունակէ Արցախահայութեան մարդասիրական օժանդակութեան ծրագիրը



Բարձր հովանաւորութեամբ Գերարաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի, Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի, մարդասիրական օժանդակութիւնները կը շարունակուին՝ տեղահանուած Արցախահայութեան բարօր կեանքին համար:

Առ այդ, համագործակցութեամբ Հայ Օգնութեան Միութեան Գանատայի Շրջանային Վարչութեան, Ազգային Առաջնորդարանը մարդասիրական օժանդակութիւն ղրկեց Երեւան, որպէսզի Հայաստանի Հայ Օգնութեան Միութիւնը Փետրուար ամսուն տրամադրէ տեղահանուած Արցախահայութեան:

Այս առթիւ, յատուկ շնորհակալութիւն կը յայտնենք Տէր եւ Տիկին Արեգ եւ Քրիստին Մարգարեաններուն, Տէր եւ Տիկին Արթօ եւ Ալիս Մարգարեաններուն, Դեղագործ Տիկին Սեղա Մարաշեանին եւ իր ընտանիքին, Բժիշկ Պարոյր Թուխմանեանին, ինչպէս նաեւ Տիկին Քրիսթին Գանու Մեթգին, որոնք մարդասիրական պիտոյքներ նուիրեցին, որոնք արդէն իսկ Երեւան հասան՝ Արցախահայութեան կարիքներուն համար:

Մեր գնահատական խօսքը կը փոխանցենք նաեւ Տիկիններ Ռիթա Ադդալային, Թամար Ապրաքեանին, Մարիա Քէօսէեանին, Օրիորդ Վանա Գարայեանին, Պրն. Կարի Մինասեանին եւ Պրն. Աբրահամ Թութրեանին, որոնք սիրալոյսով օժանդակեցին մարդասիրական իրերու դասաւորման աշխատանքին:

ԴԻԻԱՆ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՍԱՌ ԱԾԽԱՐՀԻ ՊԺԵՂ ՄԸ ԶԵՐՄՈՒԹԻՒՆԸ...

Գանգուր, կարճ մագերով, միջահասակ, պինդ կազմուածքով կին մը: Եթէ ըսեմ՝ վառվռուն ու գերաշխուժ, քիչ պիտի ըլլայ. ճիշդ է ըսել կեանքով յորդուն հոգի մը: Սեւ ու կլոր աչքերէն կը ցայտէ խայտանք, կոբով, վագք՝ կեանքի գեղեցկութեէն ու բարիքէն յափշտակելու եւ ամէն գնով բաժին մըն ալ իր հարազատներուն, իր ազգի գաւակներուն հանելու: Աչքերուն նայելով կը հասկնաս, որ ինչ ալ ընես՝ արդէն ուշ ես, իսկ ինք շատ առաջ է քեզմէ, ժամանակէն առաջ ալ հաւանաբար...

Չորս տասնամեակ առաջ եւ թերեւս աւելի հասած է այս ափերը՝ գաղթելով Եգիպտոսէն: Հետեւաբար, զարմանալի չէ, սառ աշխարհին մէջ պճեղ մը ջերմութեան գաղտնիքը, որ զայն բերած է Եգիպտոսի աւազներէն, բայց զարմանալին այն է, որ կրցած է այդ ջերմութիւնը առկայծ պահել ու զայն ի հարկին տալ բոլոր անոնց, որոնք պէտք ունին ատոր, բոլոր անոնց, որոնք լաւ կը հասկնան Արեւելքի ջերմութեան բոյրը ... Տակաւին, ուշագրաւ է այն, որ հակառակ իր ստացած դիտութեան, պաշտօններուն ու կատարած տարբեր պատասխանատու աշխատանքներուն հայ եւ տեղական մակարդակներու վրայ՝ այնքան գեղեցիկ կը հնչէ անոր Եգիպտական արաբերէնը եւ այնքան յստակ ու մաքուր, որ պահ մը կը կարծես՝ ճիշդ հիմա ոտք դրած է այս քաղաքը:

Անոր հետ առաջին կապս եղած է հեռաձայնային շատ կարճ հաղորդակցութիւն մը, որմէ կը յիշեմ հիմա շեշտաւոր բառերով հեգնանք մը Քորոնային ուղղուած. «Է՞հ, ի՞նչ կայ մտահոգութիւնք, օր մը պիտի անցնի ու վերջանայ, ու դուք շատ լաւ պիտի ըլլաք»:

Քանի մը ամիս ետք իր առաջարկով կրկնուեցաւ հաղորդակցութիւնը, որուն ընթացքին առաջարկեց օգտակար դառնալ՝ նկատի ունենալով երկրին դժուար պայմանները: Ի՞նչ մեղքս պահեմ, չէի ուզեր ընթացք տալ իր օգնու-

թեան առաջարկին եւ շուտով պատրաստուեցայ ըսելու, որ բաւարարուած եմ: Բայց չեմ գիտեր ինչպէս տեղի տուի իր պնդումներուն եւ որոշեցի...հա՛, դանակ: Զարմացական ոճով կրկնեց. «Խանա՞կ»: Քիչ ժամանակ անց խնդրածս մինակը չհասաւ: Անոր ընկերակցած էին այլ առարկաներ ու անհրաժեշտ պարէնի կոկիկ ծրար մը:

Հաղորդակցութիւնները շարունակուեցան եւ հասցուցին սուրճի մը շուրջ մէկտեղուելու օրուան: Այդ օրերուն մեր տնային պայմանները համեստէն ալ աւելի նուազ էին, բայց իրեն համար այդ բոլորը արժէք չունեցան. շուտով ի յայտ եկաւ, որ ինք վեր է երեւոյթներէն, վեր է նիւթեղէնէն: Ես գինք կը ճանչնայի միայն հեռաձայնով փոխանակուած քանի մը արտայայտութիւններով, անկէ դուրս լսած էի, որ Համազգայինի մէջ պատասխանատու պարտաւորութիւն ստանձնած է եւ գործուն ներկայութիւն է ու հասնող ձեռք գաղութի մէջ գործող բոլոր կառոյցներուն:

Շատ չանցած ան լուեկայն ամբողջացուց եւ քիչ մըն ալ աւելցնով այն ինչ հարկաւոր էր որեւէ ընտանիքի մը, որ նորը որոշած է շինել բոլորովին նոր ցամաքամասի մը վրայ: Այո՛, հանդարտ, բայց լուռ ապահովեց այն, ինչ որ մարդուն միտքէն կրնայ անցնիլ ու չանցնիլ: Այդպէս կրնայ ընել միայն հարազատ մայրդ: Ո՛չ ոք կեանքին մէջ կրնայ հասկնալ ընտանիքի մը կարիքները մօր մը չափ, ոչ ոք: Յստակ է , չէ՞, մայրական իր հոգատարութեան արժանացեր էինք...

Նիւթեղէնը անոր միակ նպաստը չէր, անոր խօսքերէն, շարժումներէն, արտայայտութիւններէն, ժպիտէն դուրս կու գային քաջալերանքի, վաղուան օրուան հանդէպ հաւատքի, յոյսի, քաջութեան, տեղի չտալու, լաւատես ըլլալու խօսքեր: Փաստօրէն նախանձելի է դժուարութիւնները արհամարհելու անոր գործածած իւրայայտուկ եղանակը, որուն

մասին ոչ մէկ անգամ ուղղակի բացատրած է, բայց կրցած եմ ճարպիկութեամբ մը զայն իւրացնել:

Կրցած եմ հասկնալ նաեւ, որ այնքան ալ հեշտ չէ եղած իր կեանքի ճանապարհը, բայց ոչ մէկ անգամ անցածին հանդէպ նշոյլ մը իսկ ափսոսանք տեսած եմ աչքերուն կամ ձայնին մէջ: Ամէն մէկ դէպքէն, իրեն յատուկ հիւմորով վեր կը հանէ այն միակ լաւ բանը, հոգ չէ որքան փոքր, բայց զայն քեզի կը հրամցնէ շատ հարազատ, շատ իմաստալից...Հիմա դուն ըսէ, մարդ ներքնապէս որքա՛ն հզօր պիտի ըլլայ, որ հիւմորով նեղութեան մէջէն բարիքը քեզի հրամցնէ...Անոր յուզումը կարելի եղաւ տեսնել միայն Արցախի պատերազմի օրերուն, անկէ ետք եւ դեռ մինչեւ այսօր, երբ կը յիշէ մեր նահատակուած տղաները:

Ինծի համար անոր կարեւորագոյն յատկութիւններէն մէկը այն է, որ ան ոչ մէկ անգամ իր խօսքին մէջ կը դնէ իր փորձառու ըլլալու հանգամանքը, հետեւաբար խրատը՝ ըսելով. «Պէտք է այսպէս ընէք...», «Ժիշդ արդիւնքի հասնելու համար, պէտք է...», «Պէտք է հարցնէք»: Փոխարէնը իր փորձառութիւնը, իր գիտելիքը, իր ըսելիքը այնպիսի անուղղակի ոճով կը պատմէ, որ բոլորովին հեռու կը մնայ «Ես պատմեմ՝ դուն հասկցիր» մօտեցումէն:

Ո՛չ ես, հաւանաբար, ո՛չ ինք պիտի կրնանք ճիշդ ըսել, թէ ե՛րբ եւ ինչպէ՛ս ստեղծուեցաւ մեր կապը:

Կեանքի մէջ անձնաւորութիւններու յատկանիշերը չափազանցելով տալու, զանոնք աստուածացնելու փորձ ընելը

այնքան ալ հաճելի չէ, ընդունուած չէ, բայց այս պարագային ըրածս չափազանցութիւն չէ, ոչ ալ արժանիքներու շեշտադրում, այլ պարզապէս անձնաւորութեան մը կերպարը. գինք լաւ ճանչցողները միայն կրնան հաստատել ըսածներուս իրականութիււը, որ կը մնայ այն փոքր բաժինը միայն, որ կ'երեւի մեզի...» Ով կարդալ սիրտը գիտէ»:

Հիմա, մինչ մենք կը թեւակոխենք մեր երկրորդ տարին այս երկրին մէջ, մեր խոր սէրն ու յարգանքը, մեր երախտագիտութիւնը կ'երթայ անոր, որ մէկ տարի մեր կողքին մնաց, որ ոչ մէկ ճիգ խնայեց մեզ ոտքի պահելու, ապահովելու...եւ ամէնէն կարեւորը՝ մայրական գուրգուրանքով պատելու, երբ ոչ միայն ապրած երկիրդ, այլ աշխարհն ամբողջ կը տատանի համաճարակին պատճառով, տնտեսութիւններ կը քայքայուին եւ կեանքեր կը մարին ամէն օր:

Կեանքի ընթացքին բնական է, որ հանդիպինք տարբեր բնաւորութիւններով մարդոց, որոնցմէ իւրաքանչիւրը տարբեր տպաւորութիւն կը ձգէ մեր վրայ, բայց քիչեր են անոնք, որոնց մասին երբ խօսինք կամ պատմենք, կը զգանք, որ ինչ բառ ալ գործածենք, ոչ թէ բաւարար պիտի չըլլայ, այլ արդար պիտի չըլլայ անոնց մեծութիւնն ու խոնարհութիւնը նկարագրելու:

Այդպիսի մեծութիւն է Արշօն, որուն մենք վարժ ենք կանչել՝ «տիկի՛ն Արշօ»:

Այո՛, սառ աշխարհի մե՛ր պճեղ մը ջերմութիւնը...

Սիւլի Աբէլեան

Այցելեցեք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցեք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը HITUNES.CA	Ունկնդրեցեք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցեք շաիեկան հարցազոյցներ TRIKTRAK.CA
--	---

Ի խորոց արտի խօսք Հոգեւոյս Մեղրիկ Սրբազանէն՝ «Պգտիկուց պարտք մը ունիմ քեզի սիրելի տոքթոր»

Հոգեւոյս Մեղրիկ եպիսկոպոս Բաբիքեանը 2014-ին տասը տարի բծախնդրօրէն կատարելէ ետք Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովուական ծառայութիւնը՝ Գանատայի հայոց թեմի Առաջնորդ ընտրուեցաւ Թեմի երեսփոխանական ժողովին կողմէ: Ան իր շատ սիրած Ս. Աստուածածին եկեղեցին ու անոր հաւատացեալ ժողովուրդը ձգելով հաստատուեցաւ Մոնթրէալի Առաջնորդարանին մէջ: Մոնթրէալ հաստատուելէն երկու ամիս ետք, ժամադրուած երկու ամիսէն հետոյ հետ շնորթեցաւ իր ընտրութեան արժեքը: Ունեցանք սերտ խօսակցութիւն եւ կարծիքներու փոխանակում: Այդ օրերուն «Բժիշկին Գ. խօսքը» եւ «Բժիշկին Գ. խօսքը» գիրքերս պատրաստ էին տպարան յանձնուելու, սակայն չէր գրուած անոնց յառաջաբանները: Մեր խօսակցութեան ընթացքին տեղեակ պահեցի զինք այս երկու գիրքերուն մասին: Ան փափաքեցաւ տեսնել գիրքերը:

Յաջորդ օր այցելեցի զինք եւ մեքենագրուած երկու գիրքերս յանձնեցի իրեն: Ան մի քանի վայրկեան թղթատելէ ետք ըսաւ՝

«Սիրելի տոքթոր ես պիտի գրեմ այս գիրքերուն յառաջաբանը»:

Ես անակնկալի եկայ իր սրտաբուխ առաջարկով եւ շուտով պատասխանեցի՝

«Շնորհակալ եմ սրբազան ձեր այս մտածումին համար: Ինծի համար մեծ պատիւ է հարստացնել գիրքերս ձեր յառաջաբանով»:

«Սիրելի տոքթոր Հարպոյեան, ես պզտիկուց պարտք մը ունիմ քեզի հանդէպ, տարիներէ ի վեր այդ պարտքս չեմ կատարած, հոգիս զիս կը տանջէ, գիրքերուդ յառաջաբանը գրելով հոգիս պիտի հանդարտի եւ պարտքս վճառած պիտի ըլլամ»:

Շարաթ մը ետք, ան զանգահարեց եւ իմացուց, որ երկու գիրքերուն նոյն յառաջաբանը գրած է եւ խնդրեց, որ առաջնորդարան հանդիպիմ եւ կարգամ իր գրած յառաջաբանը: Յաջորդ օր այցելեցի զինք եւ կարգացի իր գրութիւնը: Շշմեցայ երբ կարգացի, որովհետեւ յառաջաբանին մէջ ընդգծելէ ետք հատորներուն կարեւորութիւնը եւ իմ գովքս հիւսելէ ետք՝ մէջերած էր ինծի վերաբերող յուշատուում մը, որ ես բոլորովին մոռցած էի: Ահաւասիկ այդ յուշատուումը.

«Բժիշկ Կարպիս Հարպոյեան: Կամ՝ «Տոքթ. Հարպոյեան»: Այսպէս ճանչցած եմ զինք, տակաւին 1977-ին, 9 տարեկանէս սկսեալ:

Համագգայինի Լիբանանի Շրջանային վարչութիւնը, Լիբանանի քաղաքացիական պատերազմի տաք օրերուն, կազմած էր «ԾՆԾՂԱՅ» մանկապատանեկան երգչախումբը, որուն մաս կը կազմէին նաեւ «Տիկին Հարպոյեան»ը (այսպէս գիտէինք) եւ իրենց աղջնակը՝

Դաւարը: «Տոքթորն» ալ յաճախ էջրէֆիէի «Ազատամարտ» ակումբին մէջ ներկայ կը գտնուէր փորձերուն եւ տարօրինակօրէն կը ճանչնար իւրաքանչիւր երգող աղջիկ ու տղայ: Փորձերու աւարտին յաճախ օրիորդ Ալիս Գազանճեանին հետ «չաքար-չոքոյա» կը հրամցնէր եւ տիկին Հարպոյեանին հետ անօրինակ գուրգուրանք կը տածէին իւրաքանչիւր մանուկի նկատմամբ, մանաւանդ համեստ ընտանիքներու զաւակներուն հետ:

Բայց հետեւեալ դէպքը, զինք առաւել եւս «մեծցուցած էր աչքիս», որպէս «չա՛ր բարի մարդ»: Լսած էի, որ օր մը «ԾՆԾՂԱՅ»ի մանուկներէն մէկը, մօրը հետ բժիշկի կ'երթայ, մօրը չափազանց անհանգստութեան պատճառով, որովհետեւ կորսնցուցած էր իր 21-ամեայ զաւակը: Երբ բժիշկին քով կը մտնեն, տոքթ. Հարպոյեանը կը ճանչնայ մանուկը, կը գնահատէ անոր անխափան մասնակցութիւնը փորձերուն եւ քննելէ ետք հիւանդը, ախտանշումը կատարելով՝ բոլոր դեղերը կը տրամադրէ. իսկ պատուոյ գինը կը մերժէ առնել, մանուկին մօրը ըսելով.

– Ես պատիւ կը զգամ, որ ձեր զաւակը հայ երաժշտութեան կը ծառայէ: Թումբերուն տակ անոր փորձերուն մասնակցութիւնը աւելի կ'արժէ քան իմ կատարածս: Աստուած հետեւնիդ ըլլայ: Ոեւէ ատեն երբ պէտք ունիք ինծի, ես պատրաստ եմ:

Այս պատմութիւնը լսած էի այդ պատանիէն: Լսած էի նաեւ, որ անոնք երբ բժիշկի գացած էին, վստահ չէին, որ իրենց ունեցած գումարը պիտի բաւէ դեղերուն գնման համար»:

Տեղեկանալէ ետք այս յուշատուումը հետաքրքրութիւնս արթնցաւ եւ ուզեցի գիտնալ այդ հիւանդ մանուկին ո՞վ ըլլալը: Ուստի խօսքս Սրբազանին ուղղելով հարցուցի.

«Սիրելի Մեղրիկ սրբազան, կը յիշե՞ս այդ մանուկին ով ըլլալը, այսօրքն՝ անոր անունը եւ մականունը»:

Այդ վայրկեանին անոր աչքերը արցունքով յորդեցան, քար լուծեան մատուցեցաւ, ոտքի ելաւ, մօտեցաւ ինծի եւ ճակատս համբուրելով ըսաւ.

«Սիրելի տոքթորս, այդ մանուկը ես էի: Այդ օրուքն է ի վեր ես առիթը չէի ունեցած իմ շնորհակալութիւնս յայտնել քու այդ ազնիւ վերաբերմունքիդ համար, մեծ պարտք մը ունէի քեզի հանդէպ: Ահա, այսօր այդ պարտքս մատուցանեցի: Հոգիս եւ խիղճս այլեւս հանդարտ է»:

Իմ ալ աչքերս թրջեցան, կոկորդս չորցաւ եւ չկարողացայ խօսիլ: Ես նեղ կացութեան մատնուած յուզումով պատասխանեցի.

«Սիրելի սրբազան, ես այս պատմութիւնը բոլորովին մոռցած էի: Ինչ որ ըրած եմ այդ օր՝ նուազագոյն պարտականութիւն մըն էր քեզի եւ ծնողքիդ հանդէպ: Շնորհակալ եմ, որ ճիշդի պարտքը գիրքերուս հրատարակութեան արժիւ կատարած պիտի ըլլաս»:

Գիրքերս լոյս տեսան 2015-ին՝



Կարօ Բարիքեան՝ վերէն առաջին շարքի ձախէն երկրորդը, 1977

Մեղրիկ սրբազանին յառաջաբանով: Անոնց շնորհանգէսը կատարուեցաւ Մոնթրէալի, Լաւալի, Լոս Անճելըսի եւ Պէյրութի մէջ:

Հոս տեղին է յիշել, որ ես Մեղրիկ սրբազանը ճանչցած եմ իր մանկութեան: 1977-ին Պէյրութի մէջ Համագգայինի Շրջանային վարչութեան երաժշտական թեմի քանձախումբը կազմակերպեց «Ծնծղայ» մանկապատանեկան երգչախումբը ղեկավարութեամբ Վաչէ Պարսումեանի: Մեղրիկ սրբազանը իր աւագանի անունով՝ Կարօ Բարիքեան՝ երգչախումբի անդամ էր: Ես որպէս Համագգայինի Շրջանային վարչութեան անդամ կը հետեւէի երաժշտական յանձնախումբին աշխատանքներուն եւ ներկայ կ'ըլլայի երգչախումբին փորձերուն: Կարօ Բարիքեանին ծանօթացած էի երգչախումբի փորձերուն առիթով: Ան լուրջ, բարի եւ խելացի մանուկ մըն էր: Ան ունէր ճշգրիտ ականջ եւ գեղեցիկ ձայն: «Ծնծղայ»ն վեց ամիսներու փորձերէ ետք հանրութեան ներկայացուց ճոխ յայտագրով երգահանդէսներու շարք մը: Այդ երգահանդէսներուն Կարօն իր անուշիկ ձայնով մեներգեց՝ Թ. Մելիքեանի «Մանուկն ու ջուրը» երգը, որ արժանացաւ ունկնդիրներուն բուռն ծափահարութեան:

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը 1 յունիս 2014-ին կազմակերպած էր երգահանդէս մը կատարողութեամբ՝ «Նոր Ծաղիկ» երգչախումբին, ի պատիւ Գերշ. Տէր Մեղրիկ եպիսկոպոս Բարիքեանի առաջնորդ ընտրուելուն:

«Նոր Ծաղիկ» երգչախումբը այդ

օր պատուեց նորընտիր առաջնորդը յառուկ եւ կոկիկ յայտագրով մը: Յայտագրի կիսուն, Սրբազանին անակնկալ եղաւ իր մանկութեան 1977-ին Պէյրութի Համագգայինի «Ծնծղայ» երգչախումբին մէջ երգած «Մանուկն ու ջուրը» երգին ունկնդրութիւնը: Մեղրիկ սրբազան յուզուած շնորհաւորեց «Նոր Ծաղիկ»-ի խմբավար՝ տիկին Էլօ Հարպոյեանը այս անակնկալին համար եւ ըսաւ.

«Տիկին Էլօ՛, այս պահուս զիս տարիք մանկութեանս եւ «Ծնծղայ» երգչախումբի անուշ տարիներուն: Հետաքրքիր եմ գիտնալ՝ ո՞վ արձանագրած էր երգս եւ մինչեւ օրս պահած էր այդ արձանագրութիւնը որպէս գանձ: Կ'ենթադրեմ արձանագրողը եւ պահողը ձեր ամուսինը յարգելի տոքթ. Հարպոյեանին է»:

«Այո՛ սրբազան, ամուսինս՝ Կարպիսը արձանագրած է 1977-ին եւ մինչեւ օրս խնամքով պահած է այդ արձանագրութիւնը»:

Մեղրիկ սրբազան ինծի ուղղելով խօսքը ըսաւ՝ «Շնորհակալ եմ տոքթոր այս անակնկալին համար: Ենթադրութիւնս ճիշդ ելաւ»:

Մեղրիկ եպիսկոպոս Բարիքեան վախճանեցաւ 16 յունուար 2021-ին, Պէյրութ, Լիբանան:

Շատ սիրելի Մեղրիկ սրբազան, երթդ բարի: Հանգչէ՛ խաղաղ, որովհետեւ մեկնեցար պարտքդ կատարելէ ետք: Երանի անոնց որոնք կը մեկնին անպարտ:

Յարգանք քու մեծ, բարի եւ խոնարհ հոգիիդ:

Բժիշկ Կարպիս Հարպոյեան

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼՍԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

***Նոր Հասցէ՝**

Voyages Haig Travel

4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝

(514) 284-7676

PERMIS DE QUÉBEC

Tel: + 1 514-284-7676

Email info@haigtravel.ca

Եռաբլուրէն Ազատութեան Հրապարակ

«Մարդիկ իրենց 20 ամեակի տարեգարձները ռեստորաններում են տօնում, մենք եռաբլուրում ենք բալե՛ս: Մարդիկ իրենց 20 ամեայ տարեգարձները ռեստորաններում են տօնում բալե՛ս, իսկ մենք՝ եռաբլուրում, բալե՛ս, ա՛խ բալե՛ս, ցաւդ տանեմ բալե՛ս...»: Ողբացող մօր հեկեկանքին ձայնը ձիւնախառն մրրիկին հետ եկաւ ու ոսկորներս ծակեց...:

Նորօրեայ նահատակ, հայրենադարձ երիտասարդ Կարօ Յովակիմեանի քառասունքին առթիւ հաւաքուածներս մեր հայեացքները մեզմէ քանի մը գերեզման հեռու, ծնկաչոք տղուն նկարը շոյող մօր ուղղեցինք ու բնականաբար աւելի յուզուեցանք...: Տղուն տարեդարձն էր փաստօրէն...: Երեք հոգիով եկած էին «տարեդարձ նշելու»:

Քանի մը ըուպէ ետք, անսպասելիօրէն մեր խումբէն մէկը երգելու կը սկսի՝ «Ախ Յետայինե՛ր, ջան ֆետայիներ, ձեր մայրերը ձեզ դուրպան, Մշոյ սուլթան Սուրբ կարա, կարապետ, թող, թող...» Կարոյին մեծ հայրն է, որ երգով փորձեց իր վիշտը արտայայտել, բայց վիշտը խնդթեց ծերունիին կոկորդը ու աչքերէն հոսող արցունքները արտասուքի վերածուեցան: Լացինք բոլորս, տղամարդի՛կ ու կանա՛յք, հայաստանցիք ու սփռւեքահայեր, լացինք միասնաբա՛ր: Ձիւնը կը շարունակէր տեղալ, կը տեղար առատօրէ՛ն, կարծես մեր այրող հոգիները կ’ուզէր գոմացնել: Յաւի, ողբի ու ափսոսանքի կրակ կայ մեր հոգիներուն մէջ:

Միայն հինգ գոյն կը գերիշխէ եռաբլուրին վրայ՝ Իւրաքանչիւր գերեզմանի վրայ բարձրացող եռագոյնը, կարմիր ու սպիտակ մեխակները, սեւ տապանաքարերն ու ամէն ինչ ծածկող ձիւնի սպիտակը: Գոյներու այս համադրումին մէջ բազմաթիւ մարդոց եռուզեր կայ, լուռ բայց նեղացուցիչ եռուզեր, ինչու՞ այսքան մարդ կայ այստեղ, ինչու՞ այսքան մարդ պէտք է ըլլար այստեղ:

Հարազատներով կ’ողջագուրուինք ու մեր ճամբան կը բռնենք դէպի դուրս: Ու ահա մեր դիմաց հայր ու մայր մը կը քալեն դիւիկոր ու արցունքոտ աչքերով: Հայրը իր մէկ ձեռքով մե՛ծ ջըջանակ մը կուրծքին սեղմած, միւս ձեռքով ցաւէն կքած տիկնոջ ձեռքէն բռնած կը քալէ մեր ուղղութեան հակառակ: Շրջանակին նկարին կողմը ալիհեր մարդուն կուրծքին սեղմուած է, չեմ տեսներ ո՛վ ըլլալը: Վստահաբար նահատակ տղուն նկարն է: Շրջանակը պիտի տանի ու տապանաքարին վրայ հանգչեցնէ հազարներ հաշուող պայծառ դէմքերուն կողքին աւելնալու:

Ամբողջ սրտովս կ’ուզեմ տեսնել նահատակին նկարը, բայց հայրը այնքան ամուր սեղմած է կուրծքին, որ թէեւ դիտմամբ ճի՛շդ քովէն կ’անցնիմ ու անմիջապէս ետեւ կը նայիմ տեսնելու նկարը, ափսոս բան չեմ տեսներ: Կարեւոր չէ... բոլորը անխտիր մեր լուսաւոր տղաքն են:

Ահաւոր ծանրութիւն մը կուրծքս պատած, շնչելու դժուարութեամբ կը հասնիմ մեքենայիս ու կը փորձեմ դուրս գալ Եռաբլուրէն: Բլուրէն դէպի պողոտայ տանող ճամբու աւարտին ճանապարհային ոստիկանները դուրս ելլը փորձող մեքենաները կը կեցնեն ու յանկարծ ինքնաշարժներու շարասիւն մը ներս կը մտնէ: Ըստ երեւոյթին նահատակի մը յուղարկաւորութիւնն է: Հայաստանեան թիբիկ նիվա մեքենաներ, իւրաքանչիւր մեքենայի առջեւ մեխակներով մեծ տառ մը գրուած ու բարձրացուած է: Կը սկսիմ կարդալ՝ առաջին մեքենային վրայ՝ Հ, երկրորդին՝ Ա, երրորդին՝ Մ, Չորրորդին՝ Ո, հինգերորդին վրայ տառ չէ գրուած, այլ թուական՝ 2000 ու ետեւէն շտապ օգնութեան մեքենայ մը ու ապա սովորական տասնեակ մեքենաներ:

Պատերազմէն գրեթէ չորս ամիսներ ետք, տակաւին եռաբլուրի մէջ օրական գրութեամբ մեր անմահացած տղոց հուղարկաւորութիւններ տեղի կ’ունենան: Չորս ամիս ետք, օրական թաղում կայ եռաբլուր, անհաւատալի ու նոյնքան ցաւալի... իսկ հիմա 2000–ին ծնած ՀԱՄՈ–ին յուղարկաւորութիւնն էր:

Եռաբլուրէն դէպի «Ազատութեան» Հրապարակ կը հասնիմ ու կը միանամ այս ողբերգութեան վերջ տալու եւ մեր կոտորած մէջքը շտկելու ձգտող հազարներու հանրահաւաքին: Յաւի, ողբի, կորուստի, յուսահատութեան, եւ ափսոսանքի զգացումները մէկ կողմէն, յոյսի, կամքի եւ այս ծանր ճգնաժամէն դուրս գալու վճռակամութեան զգացումները միւս կողմէն կ’ալեկոծեն ամբողջ էութիւնս: Եռաբլուրին ու հրապարակին միջեւ հիմնական հասարակ յայտարար մը կը փորձեմ գտնել ու երկար փնտռութւքէ ետք կը գտնեմ այդ: Հիմնական յայտարարը լուսաշող նահատակներուն եւ ցուցարարներուն ԱԶՔԵՐՆ էին որոնցմէ մէկ ու յստա՛կ պատգամ կու գար՝ ՊԱՅՔԱՐԻ՛կ:

Գէորգ Յակոբեան

Փետրուարեան ապստամբութեան 100ամեակին առիթով



Նկարին մէջ՝ Փետրուարեան Ապստամբութեան հրամանատարական կազմը

Հայոց աշխարհի վերջին հարիւր ամեակի պատմութեան մէջ յատուկ նշանակութիւն ունեցած են Մուսա Լեւոն ՔԱՌԱՍՆՕՐԵԱՅ Հերոսամարտը ու Փետրուարեան Ապստամբութեան ձեռքբերումը, նաեւ 44օրեայ Արցախեան վերջին պատերազմի տխրահռչակ պարտուողական «յայտարարութեան» ամօթի թուղթը :

Հարիւր տարի առաջ, մուսալեռցիք Խոյանալով կարողացան վեր սլանալ ու ապահովել սեփական կեանքի գոյատեւումի երաշխիքները: Այդ հերոսամարտը արժանացաւ խոր

գնահատումի, չչմեցնելով միջազգային ընտանիքը եւ հանրային կարծիքի ուշադրութեան կիզակէտը դառնալով , ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐՈՒԱՅ երկաթեայ կամքով ու նուիրումով:

Մինչ պատմական դառն ճակատագրի արդիւնքով ԽՈՐՀՐԴԱՅՆԱՅԱԾ էր Հայաստանի հանրապետութիւնը, յայտնուելով երկսայրի սուրի, տամոկիեան մուրճ-մանգաղի եւ փանթուրքիզմի միջեւ, որպէս չարեաց փոքրագոյն՝ ընդունեց խորհրդայնացման տարբերակը :

Իշխանութիւնը խաղաղ կերպով յանձնուած էր խորհրդային համայնավար դեկավարութեան, պայմանաւ, որ հանրապետութեան նախկին դեկավարները խաղաղ ու առանց հետապնդումի ու հարցաքննութիւններու շարունակեն իրենց քաղաքացիական սովորական կեանքը: Բայց պատահեցաւ ճիշդ հակառակը. չուրջ երկու ամիսներու ընթացքին երեւանեան բանտերը խճողուեցան Հայաստանի Հանրապետութեան նախկին վարչակարգի անդամներով, յատկապէս՝ ԴԱՇՆԱԿՅԱԿԱՆ դեկավարութեամբ, տակաւ առ տակաւ համբերութեան բաժակը յորդեցնելով :

Հայաստանի հանրապետութիւնը այն եզակի պետութիւն էր, որ խաղաղ ոչ արիւնալի ճանապարհով մաս կազմած էր խորհրդային միութեան ընտանիքին, ինչ որ անհանգստութիւն առաջացուցած էր խորհրդային կարգ մը իշխանական շրջանակներու մէջ, որոնք ձեւով մը կ’ուզէին սեղմել ու ճնշել հայ ժողովուրդի ազատատենչ կամքը, սանձելով անոր դիմադրողականութիւնը ու մարտունակ ոգին :

Ահա պատահեցաւ այն, որ 1921–ի ՓԵՏՐՈՒԱՐ 18–ին , Հայրենիքի փրկութեան կոմիտէն յաջողեցաւ ժողովրդային լայն մասսայի ապստամբութեամբ, բանտերու նկուղէն ազատել կացինահարուելու դատապարտուած դաշնակցականները: Սակա՛յն, ափսո՛ս կացինահարուած էր՝ Համագասպն ու իր բանտակից կարգ մը ընկերները:

Ազատութեան տենչը ի կատար ածուած էր, դարձեալ պիտի փայլէր ազատ ու անկախ հայրենիքի դրօշը ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒ օրուան տեւողութեամբ հայրենի երկնակամարին վրայ: Մինչ փոխանակուած էր երեք դրացի երկիրներու միջեւ դիւանագիտական ներկայացուցիչներ (դեսպանատուներ) եւ կեանքի կոչուած էր նաեւ երկու ԲԱՏԻՕ ԿԱՅԱՆՆԵՐ:

Սովետական միութեան կարմիր բանակի վաշտերը պիտի չուշանային գրոհելու Հայաստանի վրայ,

վերստին խորհրդայնացնելու երկիրը եւ տերեւաթափ ընելու արիական սերունդէն մարտունակ տարրը, ինչ որ չէր յաջողուած առաջին փորձով:

Հ.Յ.Դաշնակցութիւնը ընտրեց սփռւեքի ճանապարհը, միայն ԵՕԹԱՆԱՍՈՒՆ տարիներ ետք, երբ Սովետական միութիւնը դադայուեցաւ, յաջողեցաւ աւանդական ազգային կուսակցութիւններու կարգին կրկին վերընձիւղուիլ հայրենիքի հողին վրայ :

Հ.Յ.Դաշնակցութիւնը աչքերը պիտի բանար Արցախեան պահանջատիրական սաղմային գոյաւորումին ու ժողովրդային խմորումներունուն մէջ: Վերջապէս, ազգային ազատագրական պայքարի ընդմէջէն, Հայ ժողովուրդին վիճակուեցաւ ազատագրել Արցախ աշխարհի կարեւոր մէկ մասը, երբ չունէինք հայոց բանակ, բայց ունէինք վիթխարի առեւծասիրտ հայդուկներ ու մարտիկներ , Դուշման Վարդաններ ու Բեկորներ:

«ԱՆԿԱԽԱՅԱԾ» էր Հայաստանը, վերադարձած էին երկրի հին տէրերը, ու կազմուած էր Հայոց Բանակը: Ամէն ինչ արտաքինով լաւ կը թուար, բայց ներքնապէս՝ խաբուսիկ էր ամէն բան : Եկան ու անցան երկիրը շահարկող ու թալանող իշխանաւորներ , ժողովուրդը յոգնեցաւ ԽԱՅՈՂ ՆԵՐՈՒ խոստումները լսելէ, հաւատալ նորից ու խաբուել կրկին նշանաբանէն :

Երեսուն տարիներու վերանկախացած ու խարխափումներէ անցած Հայաստանը, պիտի դիմակայէր մեր պատմութեան թերեւս ամէնէն ուժքին ապտակնեւրէն ու պարտութիւններէն մէկը, դարձեալ դիմակաւոր իշխանաւորներու երկու տարուայ մէջ սերմանած երբեմնի ՏՈՒԽՈՎ , ՍԵՒ ՈՒ ՄՊԻՏԱԿՈՎ, ՀԻՆ ՈՒ ՆՈՐՈՎ , ու 44 ՕՐ շարունակ ՅԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ խաբուսիկ կարգախօսով՝ հայ ժողովուրդը դէմ յանդիման գտնուեցաւ պարտութեան ու մարդկային ու հողային կորուստներու դիմաց: Դաւաճանութիւնը նոր իմաստ ստացաւ հայ մարդու իրականութեան եւ յատկապէս հասարակութեան բոլոր ոլորտներուն ու ջըջանակներուն մէջ:

ԱՅՍՕՐ, 100 Տարի ետք, հայոց պատմութիւնը կ’արձանագրէ նոյն տողերը, հայրենիքի փրկութեան կոմիտէ, 100 տարի ետք հայրենիքի փրկութեան շարժում, 17 կուսակցութիւններու միատեղ գործակցութեամբ, համաժողովրդային լայն շերտերու մասնակցութեամբ, Սփռւեքի գանազան կազմակերպութիւններու նեցուկով, գոյգ կաթողիկոսներու օրհնութեամբ ու բազում մտաւորականներու շունդալից յայտարարութիւններու ղօղանջներով :

Դարձեալ 100 տարի ետք, հայրենիքի փրկութեան շարժումը Հայաստանի առօրեայ իրականութեան մէջ նոր փուլ մը կը թեւակոխէ: Վստահ ենք, հայ ժողովուրդը ուշ կամ կանուխ ձեռք պիտի ձգէ իր կորսնցուցած արժանապատուութիւնը: ԴԱԻԱՃԱՆՆԵՐԸ՝ պիտի արժանանա իրենց ԱՐԴԱՐ ճակատագրին, ու ՀԱՅԿ–ԵԱՆ ԲԱԶՈՒԿԸ ԴԱՐՁԵԱԼ ՊԻՏԻ ՏՆՕՐԻՆԷ ՊԱՏ–ՄՈՒԹԵԱՆ ԱՐԴԱՐԱՀԱՏՈՅՑ ՎՃԻՌԸ :

ՀՅԴ ԱՐԱՄ–ԴՐՕ ԿՈՄԻՏԷ

ՄԵԾ ՊԱՀՔ՝ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ



Մեղքերու խոստովանութիւնը սկիզբէն սահման-
ւած կարգ մըն է: Մեր նախածնողները՝ Ադամն ու
Եւան, ուտելով բարիի և չարի գիտութեան ծառէն,
անհնազանդ գտնուեցան Աստուծոյ պատուիրաններուն
դէմ, ծնունդ տալով մեղքին, որուն հետ զուգահեռ յայտ-
նուեցաւ նաև **Աստուծոյ շնորհքը՝ ողորմութիւնն ու մար-
դասիրութիւնը**: Եւ երբ Աստուած Ադամին ըսաւ.- **«Ո՞ր
ես» (Ծնն 9.3)**, խորքին մէջ այս հարցադրումը հրաւեր մըն
էր նախամարդուն, որպէսզի խոստովանէր իր մեղքը. բայց
դժբախտաբար մարդը անտեսեց իր յանցանքը և
դատապարտուեցաւ:

Աղան ու Եայէն ետք մեղքը շարունակուեցաւ աշխարհի վրայ:

Սակայն Քրիստոսի խաչելութեամբ մարդը հնարաւորութիւն ունեցաւ խոստովանութեամբ գտնելու իր հոգեկան խաղաղութիւնը:

Այսօր, Քրիստոնեական եկեղեցին ընդհանրապես և Հայց. Առաքելական եկեղեցին մասնաւորապէս հնարաւորութիւն ստեղծած են մեղքերու խոստովանութեամբ թողութիւն ստանալու շնորհքին: Ուրախալի երեւոյթ է, որ հաւատացեալներ կը խոստովանին իրենց մեղքերը և թողութեան կ'արժանանան:

Խոստովանությունը խորքին մեջ մեկ անգամուան համար սահմանուած արարք մը չէ, այլ ընթացք մըն է, որ վախճան չունի:

Բարսեղ Կեսարացի Հայրապետ մեզի կը յիշեցնէ ըսելով.- «Խոստովանութիւնը առանց հաւատքի, աղօթքի և ծոմապահութեան՝ իմաստ չունի»:

- Իսկ եթե հարց տանք թե ի՞նչ է մեղքը.

-Մեղքը Աստուծոյ կամքին և Անոր Սրբազան օրէնքներուն դէմ գործուած յանցանք մըն է՝ **մտածումով, խօսքով և գործով**: Մեղքը ըստ էութեան կը բաժնուի գլխաւոր երկու մասերու.

Ա- Ադամական կամ սկզբնական մեղք, որ ժառանգած ենք մեր նախաձնողներէն:

Բ- Գործուող կամ ընթացիկ մեղքեր, որ կը գործենք մկրտութենէ ետք, չափահաս տարիքի մէջ: Այս մեղքերը նաև ունին երկու մասեր, գիտակցաբար և անգիտակցաբար:

Անգիտակցաբար մեղքը, որ նաև ներելի կը կոչուի
կը ջնջուին խոստովանութեամբ և Ս. Հաղորդութիւն ստա-

Նալով, սակայն չկրկնուելու պայմանաւ: Գիտակցաբար գործուող մեղքերը, որ աններելի կը կոչուին, մարդս կորուստի կը դատապարտեն:

Աններելի մեղքերը ունին գլխաւոր եօթը բաժանումներ.-

- Հպարտություն
- Նախանձ
- Բարկություն
- Ծուլություն
- Ազահություն
- Որկրամոլություն (Շատակերություն)
- Բղջախտհոլություն (Ցանկասիրություն)

Մեր եկեղեցին խոստովանելու և հաղորդության ստանալու հարցը մարդուս ազատ խղճին և կամքին ձգած է, սակայն պայման դրած է, որ յաճախ հաղորդուինք:

Քրիստոնեայի կեանքը պայքար մըն է, որուն ընթացքին կրնանք սխալիլ և մեղանշել. սակայն էականը այն է, որ **քաջարար անդրադառնանք մեր սխալները և ընդունինք թէ՛ գիտակցարար և թէ՛ անգիտակցարար գործած բոլոր մեղքերը:**


Եկեղեցին, որպես **«Մայր»** և միջնորդ մեղքերէ սրբուելու և քաութիւն ստանալու, մեզի առիթը կ'ընծայէ և ցոյց կու տայ խոստովանութեամբ թողութիւն ստանալու ճանապարհը:

Իրաքանչիւր քրիստոնեայ պէտք է գիտակցի, որ Աստուած առանց մեր մեղքերու խոստովանութեան ալ գիտէ մեր մեղքերը: Աստուած Եսայի մարգարէի միջոցաւ ըսած է.- **«Ես եմ, որ քու յանցանքներդ կը ջնջեմ: Քու մեղքերդ ալ պիտի ցիշեմ: Յիշեցնօր ինծի, դուն խօսէ՛ (խոստովանի՛ր), որպէսզի արդարանաս»** (ԵՍ.43.25-26):

Ուրեմն, ընդունինք Աստուծոյ պարգևած ամենամեծ շնորհքը՝ ողորմութիւնը, և խոստովանութեամբ մշտապէս նորոգուինք և Մեծ Պահիքի այս օրերուն սրբուինք բոլոր տեսակի մեղքերէն, կրկնելով շարականագիրին բառերը.- **«ողորմութեամբդ դատէ ո՛վ Տէր, այլ ո՛չ թէ արդարութեամբ»:**

Տաթև Ա. Քահանայ Միքայելյան

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ



ՄԱՏԹԵՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆ

ԳԼՈՒԽ 2

- Մոգերու այցը (Մր 1.1-12)
- Փախուստ դէպի Եգիպտոս (Մր 1.13-15)
- Մանուկներու ջարդը (Մր 1.16-18)
- Վերադարձ Եգիպտոսէն (Մր 1.19-23)

ԲԵԹՂԵՀԷՄ, ՄՈԳԵՐԸ (Մտ 1.1-12)

Յիսուսի ծննդեան յաջորդող իրադարձութիւններուն մասին կը պատմուի Մատթէոսի աւետարանի երկրորդ գլխուն մէջ. մոգերու այցը, Սուրբ ընտանիքի փախուստը Եգիպտոս, մանուկներու կոտորածը, Եգիպտոսէն վերադարձը:

Այսօրուայ խորհրդածութեամբ եկեք անդրադառնանք երկու հիմնական հարցերու մասին.-

1- Բերդեհէմ տեղանուան

Յիսուս ծնաւ Բերդեհէմի մէջ: Բերդեհէմը փոքրիկ քաղաք մըն էր Երուսաղէմէն վեց մղոն դէպի հարաւ: Հին ժամանակներուն կը կոչուէր Եփրաթա: Բերդեհէմ կը նշանակէ Հացի տուն, որովհետեւ կը գտնուի երկրի բերրի, արգաւանդ մասի մը մէջ:

Բերդեհէմը երկար պատմութիւն ունի. Այնտեղ էր, ուր Յակոբը թաղեց Ռաքելը, **«Երբ ես կու գայի ասորիներու Միջագետքէն և մօրեցեր էի Եփրաթային, որ Բերդեհէմն է, քանսանացիներու երկրին մէջ մեռաւ քու մայրդ Ռաքելը, և ես զինք թաղեցի Եփրաթայի ճանապարհին»** (Ծն 48.7). Այստեղ էր, ուր Հոռիօ ապրեցաւ, երբ ամուսնացաւ Բոոսի հետ. այստեղէն ան կրնար տեսնել իր ծննդավայր Մովաբը. ամենակարևորը, Բերդեհէմը Դաւիթի քաղաքն էր, ուրկէ Աստուած պիտի դրկէր ժողովուրդին փրկիչը: Այս մասին է, որ Միքիա մարգարէն կը պատգամէ. **«Եւ դուն, Բերդեհէմ, Եփրաթայի տուն, թէն դուն փոքր ես Յուդայի քաղաքներուն մէջ, սակայն քեզմէ պիտի սեռի ան, որ իշխան պիտի ըլլայ Իսրայէլի մէջ, որուն ծագումը աշխարհի սկիզբէն է»** (Մք 5:2)

2- Մոգերը

Յիսուսի ծննդեան ժամանակ Արևելքէն մարդիկ եկան, որոնք յայտնի էին Մոգ անունով: Հերոդոտոս պատմիչը յստակ տեղեկութիւն կու տայ այս մասին, նշելով, որ անոնք Մեղերու ցեղախումբէն էին, մաս կազմելով Պարսկական կայսրութեան: Անոնք ուզեցին տապալել պարսկական կայսրութիւնը, ձախողութեան մատնուեցան, կորսնցուցին որեւէ նկրտում և դարձան

քահանայական ցեղ, ինչպէս դևտացիները՝ հրեաներու մօտ, ինչպէս նաև խորհրդատուներ թագաւորներուն. առանց անոնց զոհեր չէին մատուցաներ: Անոնք դարձան գիտուններ, իմաստուններ, փիլիսոփաներ, բժիշկներ, երագներու մեկնիչներ: Աւելի ուշ, մոգ բառը այլ իմաստ ստացաւ՝ կախարդ, շարլաթան, օրինակ Գործք Առաքելոց գրքին մէջ **«Երջելով ամբողջ կղզին մինչև Պաֆոս՝ այնպէղ գլխան մի ոմն մոգի՝ հրեայ սուր մարգարէ, որուն անունը Բար-Յեսու էր: (Գծ 13.6),** Սիմոն անունով մարդ մը կար, որ այդ քաղաքին մէջ նախապէս մոգութիւն կ'ընէր և կը զարմացնէր սամարացի ժողովրդը՝ իր մասին ըսելով, թէ ինք մեծ մէկն է: Փոքրէն մինչև մեծը՝ բոլորը անոր կը նայէին ու կ'ըսէին. **«Ասիկա է Աստուծոյ զօրութիւնը, որ մեծ կը կոչուի»** (Գծ 8.9,11):

Հին ժամանակ մարդիկ կը հաւատային աստղագուշակութեան: Մոգերը աստղերով կը գուշակէին մարդոց ճակատագրերը: Մենք յստակ չենք գիտեր, որ այդ օր մոգերը ինչ աստղ տեսան:

Օտար պատմութեան մէջ կայ նման արձանագրութիւն, որ երբ Հայոց Տրդատ թագաւորը այցելեց Հռոմ՝ Ներոն կայսեր մօտ, իր հետ տարաւ նաև իր մոգը (Սվետիսիոս, **«Ներոնի կեանքը»**):

ԳԼՈՒԽ 3

- Յովհաննէս Մկրտիչի քարոզութիւնը (Մր 3. 1-12)
- Յիսուսի Մկրտութիւնը (Մր 3. 13-17)

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ (Մտ 3)

Մատթէոսի Աւետարանի երկրորդ գլուխը կը վերջանայ Եգիպտոսէն վերադարձի պատմութեամբ և Սուրբ ընտանիքի Նազարէթի մէջ հաստատուելով՝ մանուկ Յիսուսի հետ:

Երրորդ գլուխը կը բացուի Յիսուս Քրիստոսը ներկայացնելով երեսուն տարեկան հասակով, որուն համեմատութիւնը կը կարդանք Ղուկասի Աւետարանի 3. 23-ին մէջ. **«Յիսուս շուրջ երեսուն տարեկան էր, երբ սկսաւ իր գործունէութիւնը»:** Այսինքն, երկու Աւետարաններուն մէջ կայ երեսուն տարիներու լռութիւն մը: Ինչ տեղի ունեցած է այս երեսուն տարիներու ընթացքին:

Յիսուս աշխարհ եկաւ որպէս Փրկիչ, և բացի Զատիկին Երուսաղէմ երթալու դրուագէն, Ան դուրս չեկաւ Պաղեստինէն: Յիսուս մեծցաւ և Իր կեանքը անցուց լաւ ընտանիքի մը մէջ, և ասկէ աւելի կեանքի մեծ սկիզբ մը չէր կրնար ըլլալ: Իմաստուններէն մէկ ըսած է. **«Լաւ մայրը հարիւրաւոր ուսուցիչ կ'արժէ»:** Յիսուս կը կատարէր որդիի պարտականութիւնները, մանաւանդ երբ կը հասկնանք, որ Յովսէփի կանուխ մահացած էր:


Կանայի հարսանիքի պատմութեան մէջ Յովսէփի մասին ակնարկ չկայ. Մարիամն էր այնտեղ Յիսուսի հետ: Յիսուս Նազարէթի մէջ հիւսն դարձաւ, աշխատեցաւ այս լռութեան տարիներուն, տիրութիւն ընելու մօրը:

Ան լաւագոյն օրինակն է այն մարդուն, որ կը ստանձնէ տան հոգը. Ան կը սորվի, թէ ինչ կը նշանակէ ապրուստ հոգալ: Եթէ Յիսուս պիտի օգնէր մարդոց, նախ պէտք է իմանար ինչպիսին է մարդու կեանքը:

Յիսուս կը նուիրուի խոնարհ աշխատանքի, նախքան ստանձնելը իրեն տրուելիք մեծագոյն գործը: Ասիկա մեզի համար դաս է, եթէ ձախողինք փոքր գործերու մէջ, ոչ ոք մեզի կը յանձնէ պատասխանատու պաշտօն:

Յիսուսի աշխատանքային տարիները մեզի համար այլ դաս են նաև. ուրիշներուն օգնելու համար մեր անհատական կեանքէն շատ բան պէտք է սորվինք:

ՄԵԾ ՊԱՅՔԻ ԵՕԹԸ ԿԻՐԱԿԻՆԵՐԸ



Մեծ պահքի եօթը կիրակիներէն իւրաքանչիւրը ունի իր անունը, ըստ որուն՝ եկեղեցական յատուկ արարողութիւն կը կատարուի այդ առիթով: Այսպէս՝

- Ա. Կիրակին եկեղեցւոյ մէջ կը յիշատակէ նախամարդոց դրախտի կեանքը եւ կը կոչուի **Բուն Բարեկենդան**:
- Բ. Կիրակին կը յիշատակէ նախամարդոց դրախտէն արտաքսումը եւ կը կոչուի **Արտաքսման Կիրակի**:
- Գ. Կիրակին ծանօթ է իբրեւ **Անառակի Կիրակի**, որովհետեւ այդ օր կը կարդացուի Անառակ Որդիին առակը (Ղուկասու ԺԵ. գլուխ):
- Դ. Կիրակին կը կոչուի **Տնտեսի Կիրակի**, որովհետեւ այդ օր կը կարդացուի տնտեսի առակը (Ղուկասու ԺԶ. գլուխ):
- Ե. Կիրակին կը կոչուի **Դատաւորի Կիրակի**, քանի այդ օր կը կարդացուի դատաւորին եւ այրիին առակը:
- Չ. Կիրակին կը կոչուի **Գալստեան Կիրակի**, որ կը ներկայացնէ Քրիստոսի աշխարհի գալը, մարդոց փրկութեան համար: Այս կիրակին Ծաղկազարդ է:
- Է. Կիրակին **Չատիկն** է:

Բարոյագիտական

- Աստուծոյ սիրելիներ, եկէ՛ք ջանանք քաջութեամբ պահել պահքը, որպէսզի հալածենք չարիքը և մարմնական բոլոր ախտերը:
 - Պահքը աշտարակ և լուսաւոր աստիճան է՝ առ Աստուած բարձրանալու համար:
